Հայտարարություն

ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի <<Արթիկի թիվ 2 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ հաստատության ֆիզկուլտուրայի հրահանգչի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

1.Նախադպրոցական ուսումնական հաստատության ֆիզկուլտուրայի հրահանգչի պաշտոնը զբաղեցնողը պետք է ունենա միջին մասնագիտական կամ բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական գործունեության առնվազն երկու տարվա մանկավարժական գործունեության ստաժ՝ համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թվականի ապրիլի 26-ի N 416-Ն հրամանով սահմանված տարիֆառրակավորման պահանջների:

Նախադպրոցական ուսումնական հաստատության ֆիզկուլտուրայի հրահանգչի հաստիքի համար սահմանված է 0.75 դրույք,

Մրցույթին մասնակցելու համար անձը տնօրենին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝
1)դիմում (Ձև 1).
2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ).
3) անձը հաստատող փաստաթուղթ.
4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).
5) ինքնակենսագրություն (Ձև 4).
6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի.
7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.
8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական.
9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են 2023 թվականի փետրվարի 28–ից մարտի 28-ը ներառյալ՝ ամեն օր ժամը 9:00 - 17:30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից, ՀՀ Շիրակի մարզ, Արթիկ համայնքի <<Արթիկի թիվ 2 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ում:

Մրցույթն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 25.03.2022թ-ի № 471-Ա/2 հրամանի մշակված հարցաշարերի (https://escs.am/am/news/11978):
Մրցույթը տեղի կունենա մարտի 31-ին ժամը 11:30 –ին<<Արթիկի թիվ 2 մանկապարտեզ>> ՀՈԱԿ- ում /հասցե ՀՀ Շիրակի մարզ Արթիկ համայնք քաղաք Արթիկ Անկախության 20/1

Մրցույթին մասնակցող քաղաքացիները կարող են հայտարարությանը հետևել **www.azdarar.am, www.artik.am** կայքերում:
Տեղեկությունների համար զանգահարել +374 77 90 72 72
Տնօրեն՝ Էլիզա Ֆռանգյան

Հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ Արթիկ համայնք քաղաք Արթիկ Անկախության 20/1
Էլ. փոստ՝ artikitiv2mankapartez.hoak@mail.ru